ԿՆՈՋ ԵՎ ՏՂԱՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԸ ՀԱՅՈՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

ԼԻԼԻԹ ԳԱՐԳՐՅՅԱՆ

Յուրաքանչյուր մարդ դիտարկում է շրջապատող աշխարհը իր անհատական և սոցիալական փորձով, այդ պատճառով այլ մարդկանց վարքը գնահատելիս մենք բնորոշում ենք այն մեր մշակութային նորմերին և կարծրատիպերին համապատասխան կամ անհամապատասխան:

Դ. Մացումոտոյի կարծիքով՝ «Կարծրատիպերը մեր ընդհանրացված պատկերացումներն են մարդկանց խմբերի, մասնավորապես նրանց հոգեբանական հիմնական բնութագրերի կամ գծերի մասին»[1]:

Չնայած առօրյա մեկնաբանմամբ մենք հակված ենք կարծրատիպերը համարել բացասական երևույթ, սակայն դրանք ոչ միշտ են միանշանակ մերժելի: Կարծրատիպերի առաջնային գործառույթը ճանաչողության գործընթացը դյուրին դարձնելն է. մարդը, ամեն անգամ տեղեկատվությունը նորից մեկնաբանելու և իմաստավորելու փոխարեն, գործում է արդեն կարծրացած սխեմաներով, իսկ դրանց ձևավորումը տեղի է ունենում ինչպես անհատական փորձի ընդհանրացման, այնպես էլ սոցիալական փորձի փոխանցման միջոցով: Ըստ Դ. Մացումոտոյի՝ կարծրատիպերը ձևավորվում և պահպանվում են հետևյալ հոգեբանական գործընթացների շնորհիվ՝ ընտրողական ուշադրություն, գնահատում, հասկացությունների ձևավորում և կատեգորիզացիա, ատրիբուցիա, հուզական հակազդում և հիշողություն: Հասկացությունների ձևավորումն ու տարակարգումը մեզ հնարավորություն են տալիս շրջապատող աշխարհի բազմազանությունը դասակարգել սահմանափակ թվով կատեգորիաների համակարգում: Սոցիալական կարծրատիպերը մարդկանց մասին կատեգորիալ պատկերացումներն են, դրանք օգնում կամ խոչընդոտում են այլ մարդկանց հետ արդյունավետ փոխհարաբերությանը: Դրանք բավականին հեշտ են ձևավորվում, քանի որ մեր դաստիարակությունը և մշակութային զտիչները առաջացնում են այլ մարդկանց վարքի և հատկանիշների վերաբերյալ որոշակի սպասումներ: Կարծրատիպերը շարունակ ամրապնդվում են, քանի որ մեր սպասումները փոփոխվում են դրանց համապատասխան, ուշադրությունը դառնում է ավելի ընտրողական համապատասխան տեղեկատվության նկատմամբ, փորձը մեկնաբանվում է առկա

[1] **Мацумото Д**. Психология и культура. СПб., 2002, с. 79.

պատկերացումների համատեքստում: Կարծրատիպերը կարող են նաև ստեղծվել և պահպանվել առանց դրանց օբյեկտ հանդիսացող մարդկանց հետ անմիջական փոխազդեցության՝ սերնդից սերունդ խոսքային վերագրումների հաղորդակցական փոխանցման միջոցով, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների ազդեցությամբ[2]:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում գենդերային կարծրատիպերը: Դրանք որևէ սեռի վերաբերյալ պատկերացումների ընդհանրացումներ են, որոնք ընդունված են տվյալ հասարակությունում, և որոնց միջոցով սահմանվում և գնահատվում են յուրաքանչյուր սեռին բնորոշ բնութագրերն ու առանձնահատկությունները: Երբ կինը կամ տղամարդը դրսևորում է գենդերային սպասումներին անհամապատասխան վարքաձև, այն ընկալվում է որպես նորմին չհամապատասխանող:

Գենդերային կարծրատիպերը թե՛ գիտական, թե՛ հասարակական լայն շրջանակների ուշադրության կենտրոնում են, քանի որ կարող են առաջացնել անարդար վերաբերմունք այդ չափորոշիչներին չհամապատասխանող մարդկանց նկատմամբ, սահմանափակել կամ խոչընդոտել անձի ինքնադրսևորումը:

Շ. Բեռնը կարծում է, որ գենդերային կարծրատիպերը կատարում են սխեմաների դեր, որոնց շնորհիվ մարդը նկատում և մտապահում է սեռերի վերաբերյալ իր կայուն համոզմունքները հաստատող տեղեկատվությունը, ինչպես նաև դիտարկվող վարքը մեկնաբանում է իր ակնկալիքներին համապատասխան: Գենդերային սխեմաները միշտ ակտիվ վիճակում են և պատրաստ են կառավարելու տեղեկատվության վերամշակման գործընթացը, քանի որ հասարակությունը ակնհայտ ճնշում է գործադրում մարդու վրա՝ սոցիալական խրախուսանքների միջոցով ստիպելով հավատարիմ մնալ գենդերային սխեմաներին[3]:

Գենդերային սխեմաների տեսության հեղինակ Ս. Բեմը գենդերային սխեմատիզացիայի գործընթացը համարում է իգականի և արականի մշակութային սահմանումներին համապատասխան տեղեկատվությունը (այդ թվում՝ սեփական անձի մասին տեղեկատվությունը) կոդավորելու և կազմակերպելու ընդունակություն: Այն տեղի է ունենում երեխայի ճանաչողական գործընթացների միջոցով և տեղեկատվությունն ըստ սեռի տարբերակելու սոցիալական պրակտիկայի շնորհիվ[4]: Այսպիսով, գենդերային սխեմաները պայմանավորում են տեղեկատվության տարբերակված վերամշակումը, ինչն էլ նպաստում է գենդերային կարծրատիպերի ստեղծմանն ու ամրապնդմանը:

---

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 79-87:

[3] Տե՛ս **Берн Ш**. Гендерная психология. СПб., 2002, էջ 235-236:

[4] Տե՛ս **Бем С**. Линзы гендера: трансформация взглядов на проблему неравенства полов. М., 2004, էջ 313-314:

Կլեցինան առանձնացնում է գենդերային կարծրատիպերի երեք խումբ: Առաջինը առնականության/կանացիության կարծրատիպերն են, որոնք վերաբերում են անձի հատկանիշներին և որակներին[5]: Տղամարդկանց վերագրվում են այնպիսի որակներ, ինչպիսիք են ակտիվությունը, ագրեսիվությունը, համարձակությունը, մրցակցայնությունը[6], ուժը, հաջողության ձգտումը, հուզական վերահսկողությունը, հավակնոտությունը, ռացիոնալությունը[7]: Կանանց վերագրվում են հետևյալ հատկանիշները՝ պասիվություն, անհամարձակություն, կախյալություն, տրամաբանական մտածողության և ձեռքբերումների ձգտելու բացակայություն[8], ֆիզիկական գրավչություն, հուզականություն, հոգատարություն, միջանձնային հարաբերությունների կարևորում[9]: Գենդերային կարծրատիպերի հաջորդ խումբը առնչվում է ընտանեկան և մասնագիտական դերերի գենդերային տարանջատմանը. տղամարդկանց ավանդաբար վերագրվում է ընտանիք կերակրողի/ապրուստ հայթայթողի, կանանց՝ խնամողի և ներընտանեկան հարաբերությունները կարգավորողի դերը: Գենդերային կարծրատիպերի երրորդ խումբը վերաբերում է աշխատանքի բովանդակային տարբերություններին. կանանց վերագրվում են գործունեության էքսպրեսիվ տեսակները, տղամարդկանց՝ գործիքային[10]:

Մի շարք հետազոտություններում բացահայտվել է գենդերային կարծրատիպերի միջմշակութային նմանությունը: Հ. Բարի III-ը, Մ. Բեկոնը և Ի. Չայլդը, ուսումնասիրելով 110 մշակույթներում գենդերային սոցիալականացման առանձնահատկությունները, նկատել են, որ այդ մշակույթների մեծամասնությունում աղջիկների մեջ ձգտում են ձևավորել հոգատարություն, ենթարկվողություն և պատասխանատվություն, իսկ տղաների մեջ՝ ձեռքբերումների հասնելու և սեփական ուժերին ապավինելու ունակություն[11]:

Միջմշակութային լայնածավալ հետազոտություն են իրականացրել Ուիլյամսը և Բեստը, որի հիման վրա առաջ են քաշել գենդերային կարծրատիպերի ունիվերսալության մոդելը, ըստ որի՝ էվոլյուցիայի ընթացքում աշխատանքի գենդերային բաժանումը տեղի է ունեցել կենսաբանական տարբերությունների հիման վրա (կանայք ունակ են մանկածնության, տղամարդիկ ֆիզիկապես ավելի ուժեղ են): Ըստ այդմ՝ գրեթե բոլոր մշակույթներում կանայք պատասխանատու են ե-

---

[5] Տե՛ս **Клецина И**. Гендерная социализация. Учебное пособие. СПб., 1998, էջ 9:

[6] Տե՛ս նույն տեղը, էջ 9-10:

[7] Տե՛ս **Wood J**. Gendered Lives: Communication, Gender and Culture. 11th ed., Stamford, 2015, էջ 22:

[8] Տե՛ս **Клецина И**., նշվ. աշխ., էջ 9-10:

[9] Տե՛ս **Wood J**., նշվ. աշխ., էջ 22:

[10] Տե՛ս **Клецина И**., նշվ. աշխ., էջ 9-10:

[11] Տե՛ս **Barry H. III, Bacon M., Child I.** Cross-Cultural Survey of Some Sex Differences in Socialization. In J.F. Rosenblith and W. Allinsmith (Eds.). The Causes of Behavior: Reading in Child Development and Educational Psychology. Boston MA, 1962, էջ 253-258:

րեխաների խնամքի և դաստիարակության համար, տղամարդիկ՝ որսի (նյութական ապահովման) և պաշտպանության: Ըստ Ուիլյամսի և Բեստի՝ գենդերային կարծրատիպերը առաջացել են աշխատանքի բաժանումը ամրապնդելու համար. դրանց համաձայն՝ որոշակի սեռի ներկայացուցչի մեջ զարգանում են կամ առկա են իր գենդերային դերին համապատասխան որակներ: Մեկ անգամ ձևավորվելով՝ կարծրատիպերը ծառայում են որպես սոցիալականացման մոդելներ, որոնք ստիպում են տղաներին ձգտել անկախության և խիզախության, իսկ աղջիկներին՝ հոգատարության և շփվողականության: Հեղինակները բացահայտել են, որ արական և իգական սեռերին վերագրվող բնութագրերի հավաքածուները տարբեր մշակույթներում միանման են, և շատ քիչ տարբերություններ են դրսևորում միայն մշակույթների մի մասում[12]:

Հիմք ընդունելով այն, որ տարբեր մշակույթներում գոյություն ունեն միանման գենդերային կարծրատիպեր՝ արական և իգական սեռերին վերագրվող բնութագրերի տեսքով, մեր նպատակն է բացահայտել հայ հասարակությունում առկա գենդերային կարծրատիպերը, դրանց նմանությունը և տարբերությունը այլ մշակույթներում եղածներից:

Այդ նպատակով իրականացրել ենք որակական հետազոտություն՝ 4 ֆոկուս խմբային քննարկումների ու 16 խորացված հարցազրույցի միջոցով: Հետազոտական ընտրանքը կազմել են՝ տղամարդիկ (հայրեր), կանայք (մայրեր), պատանիներ, երիտասարդներ, նախադպրոցական հաստատություններում և հանրակրթական դպրոցներում աշխատող մանկավարժներ:

Հետազոտության մեջ ներգրավվել է 56 անձ՝ յուրաքանչյուր ֆոկուս խմբում 10-ական (տղամարդիկ, կանայք, երիտասարդներ, պատանիներ) և հարցազրույցի 16 մասնակից (8 ուսուցիչ, 8 մանկապարտեզի դաստիարակ):

Ֆոկուս խմբային քննարկումների և խորացված հարցազրույցների վերլուծությունն իրականացվել է հետևյալ մեթոդներով.

- քանակական բովանդակային վերլուծություն,
- որակական բովանդակային վերլուծություն,
- իմաստի խտացում:

Անդրադառնանք դիտարկված գենդերային կարծրատիպերի խմբերին: Առաջին խումբը, որ առանձնացրել ենք՝ հետևելով Կլեցինայի դասակարգմանը, առնչվում է անձնային որակներին, այս խմբում ներառել ենք նաև մտավոր ունակությունների վերաբերյալ պատկերացումները: Հետազոտվողների մեծ մասը գտնում է, որ տղաները աղջիկներից ակտիվ են, ըստ որում՝ այստեղ շեշտվում է ոչ այնքան վարքում դրսևորվող ակտիվությունը, որքան սեփական ճակատագրի նկատ-

[12] Տե՛ս **Williams J., Satterwhite RC., Best D.** Pancultural Gender Stereotypes Revisited: The Five Factor Model.- Sex Roles, Vol. 40, 1999, էջ 513-525:

մամբ գրված դիրքը: Տղան համարվում է իր ճակատագրի կերտողը, կյանքի սեփական ուղու սուբյեկտը, իսկ աղջկա ճակատագիրը հիմնականում պայմանավորում են ամուսնու կամ ամուսնական ընտանիքի վիճակով. ***«Աղջիկը ի՞նչ տուն կընկնի, ո՞նց կպահեն»***: Այստեղից էլ սերում է աղջկա կախյալության վերաբերյալ կարծրատիպային պատկերացումը: Ինչ վերաբերում է վարքում դրսևորվող ակտիվությանը, ապա ներկայումս թե՛ տղաները, թե՛ աղջիկները բավականին ակտիվ և նախաձեռնող են, ինչը, սակայն, բացասական արձագանք է ստանում մանկավարժների կողմից. ***«Պիտի հակառակը լիներ, պիտի աղջիկները ավելի պասիվ լինեին, այսինքն՝ հնազանդ, տղաները՝ նախաձեռնող»:***

Հաջորդ կարծրատիպը վերաբերում է հուզականություն/գործնականություն գծերին: Աղջիկներն ընկալվում են որպես ավելի հուզական, իսկ տղաները՝ գործնական. սա հատկապես արտահայտվում է ծնողների հետ փոխհարաբերություններում: Վերաբերմունքը աղջկա հանդեպ ավելի զգացմունքային/հուզական է, տղայի նկատմամբ՝ գործընկերային, ինչը առավել արտահայտված է տղամարդկանց խմբում: Աղջկա նկատմամբ վերաբերմունքում գերակշռում է հուզականությունը. ***«Աղջիկ երեխու անուշությունը լրիվ ուրիշ ա»:*** Ծնողները աղջկան ընկալում են որպես ջերմ զգացմունքներ առաջացնող օբյեկտ, միաժամանակ՝ որպես զգացմունքայնության սուբյեկտ, սակայն ոչ որպես ակտիվության, գործունեության սուբյեկտ: Վերջիններիս համար տղան արտաքին աշխարհի հետ հարաբերությունները կարգավորողն է, արդյունավետ գործունեությամբ զբաղվողը, իսկ աղջիկը՝ ներընտանեկան հարաբերությունների ջերմությունը, հուզական մտերմությունը ապահովողը: Այս համոզմունքը պատկերավոր դրսևորվում է հետևյալ տարածված արտահայտության մեջ. «***Տղա ունենամ, որ ինձ թաղող լինի, աղջիկ ունենամ՝ վրաս լացող լինի»***, որը մի քանի անգամ հնչեցրել են մեր հետազոտության մասնակիցները:

Տղաների մասին պատկերացումներում գերակշռում է նրանց ագրեսիվության, անկարգապահության շեշտադրումը, աղջիկների պարագայում՝ պատասխանատվությունը և կարգապահությունը: Հետաքրքիր է, որ նույնիսկ հակառակն ապացուցող փաստերը չեն փոխում այս կարծրատիպային պատկերացումները: Օրինակ՝ մանկավարժները երեխաների սեռային տարբերությունների վերաբերյալ հարցին անմիջապես տալիս են կարծրատիպային պատասխան՝ տղաների անկարգության, ագրեսիվության, կռվարարութան և գերակտիվության, աղջիկների աշխատասիրության և կարգապահության վերաբերյալ, սակայն շատերը հավելում են, որ վերջին տարիներին աղջիկներն ավելի ակտիվ, նույնիսկ ագրեսիվ են. ***«Աղջիկներն ավելի ակտիվ են հիմա դարձել, քան տղաները, ավելի ըմբոստացել են, ավելի կամակոր են դարձել, քան տղաները: Նույնիսկ պատահում ա շատ հաճախ, որ ձեռք են բարձրացնում տղաների վրա, ապտակում են, այդպիսի եր-***

նույթներ շատ եմ նկատել, առաջ էդպես չէր»:

Միաժամանակ մանկավարժների շրջանում պահպանվում է տղաների մտավոր գերազանցության վերաբերյալ կարծրատիպը:

Կարծրատիպերի հաջորդ խումբը առնչվում է դերային բաշխմանը: Ինչպես և ակնկալվում էր, այստեղ գերակայող էին պահպանողական պատկերացումները. տղամարդուն վերագրվում է ընտանիքի ապրուստի միջոցներ հայթայթողի և «պաշտպանի» դերը, կնոջը՝ խնամատարի: Ըստ որում՝ կնոջ ավանդական դերն ընկալվում է որպես պակաս արժեքավոր: Ըստ այդմ՝ տղամարդու կողմից կնոջ դերին բնորոշ գործառույթներ կատարելը որակվում է ոչ պատվաբեր: Այս կարծրատիպը և դրանից առաջացող սոցիալական ճնշումն այնքան ուժեղ են, որ նույնիսկ եթե կինը, աշխատանքի անցնելով, կիսում է ընտանիքն ապրուստով ապահովելու ամուսնու դերային գործառույթը, երեխաների խնամքի գործառույթը շարունակում է մնալ միայն կնոջ ուսերին: Ավելին, կա կարծիք, որ երբ ընտանիքի ֆինանսական բարեկեցության մեջ կինը տղամարդուց շատ ներդրում է ունենում, ապա՝ ա) դա բացասաբար է անդրադառնում նրանց հարաբերությունների վրա, բ) այդ փաստը պետք է գաղտնի մնա շրջապատից՝ տղամարդու «դիրքը» չվտանգելու կամ հասարակության բացասական արձագանքից խուսափելու համար:

Դերերի բաշխման կարծրատիպի հետևանք է նաև տղամարդու իշխանության կարծրատիպը, ըստ որի՝ թե՛ ընտանիքում, թե՛ կարևոր հասարակական բնագավառներում որոշումներ կայացնելը վերապահվում է տղամարդուն: Այս կարծրատիպը գերակշռում է տղամարդկանց և երիտասարդների (թե՛ արական, թե՛ իգական սեռի) խմբում: Նշվում է տղամարդկանց գերակայությունը իշխանության, որոշումներ կայացնելու, նյութական միջոցները տիրապետելու հարցում, ըստ որում՝ որքան տղամարդը դոմինանատ է և իշխող, այնքան նա ավելի «առնական» է համարվում. ***«էդ մի բանն ա, որ տղուն աղջկանից առանձնացնում ա, դե որ իրանք իրանցը պիտի ասեն ու աղջիկն էլ պիտի լսի»:***

Մասնագիտական գործունեության վերաբերյալ ևս առկա են կարծրատիպային դիրքորոշումներ՝ հատկապես հասուն տարիքի տղամարդկանց շրջանում: Տղաների համար ընդունելի են համարվում գործարարի, քաղաքական գործչի, ֆինանսիստի, մարզիկի և այլ «արական» մասնագիտությունները, իսկ աղջիկների համար՝ բժշկի, մանկավարժի, պարուհու, երգչուհու: Մասնագիտական ընտրության վերաբերյալ ոչ կարծրատիպային դիրքորոշումներ ունեին որոշ պատանիներ:

Վերոնշյալ բոլոր կարծրատիպային պատկերացումները նման են տարբեր մշակույթներում իրականացված հետազոտությունների արդյունքներին: Մեր հետազոտության ընթացքում վեր հանեցինք ևս մեկ նշանակալի կարծրատիպ, որը յուրահատուկ է մեր մշակույթին (հնա-

բավոր է նաև՝ հայկականին նման այլ մշակույթներին): Դա աղջիկներին ընտանիքի ժամանակավոր, իսկ տղաներին մշտական անդամ համարելն է: Դարեր շարունակ հայկական ընտանիքն ունեցել է հայրիշխանության ժամանակներից փոխանցված երկու կարևոր առանձնահատկություն. ընդլայնված ընտանիքի պատրիլոկալ ձևը (նորաստեղծ ընտանիքը շարունակում է ապրել տղամարդու ծնողների հետ) և ազգի կառուցակցման պատրիլինենալ բնույթը (ազգը շարունակվում է հայրական գծով, երեխաներին փոխանցվում է հայրական ազգանունը, գերդաստանի սերնդային հաշվարկը կատարվում է արական գծով, իսկ ազգում տղաների բացակայության դեպքում այն համարվում է անհետացող): Պատմաազգագրական տվյալներով՝ Հայաստանում XIX դ. երկրորդ կեսից – XX դ. սկիզբը, արյունակիցներից զատ, տվյալ ազգի անդամ էին համարվում նաև տվյալ ազգի հարսները, իսկ հարս գնացած կանայք ազգի շրջանակներից դուրս էին համարվում: Հարսը իր հայրական ազգի համար դառնում էր լոկ «ցեղակից», իսկ սկեսրայրենց համար՝ ազգագրված ազգակից[13]: Այդպիսով, իգական սեռի զավակները, լինելով տվյալ գերդաստանի ներկայացուցիչ, ամուսնությունից հետո փոխում էին իրենց կարգավիճակը՝ դառնալով պարզապես արյունակից, բայց ոչ ազգակից և ընդգրկվում էին մեկ այլ գերդաստանում, ինչի իրավական արտահայտումն էր ազգանվան փոփոխությունը:

Վերոնշյալ մշակութային առանձնահատկությունները հանգեցրել են իգական սեռի զավակներին ընտանիքի «ժամանակավոր անդամ» ընկալելուն, իսկ արական սեռի զավակներին գերդաստանի շարունակող պատկերացնելուն, ինչը հստակ արտացոլված է ժողովրդի մեջ տարածված և հաճախ կիրառվող ասացվածքներում ու առածներում. «Աղջիկը ուրիշի տան պատ ա», «Տղան օջախի ծուխը վառ ա պահում», «Եթե տղա ունես, տանդ ծուխը չի մարում» և այլն: Այս կարծրատիպը նաև առաջ է բերում ընտանիքում տղայի և աղջկա ներդրման, նրանց «օգտակարության» վերաբերյալ տարբերվող պատկերացումներ. ***«Ծնողին պահողը տղեն ա», «Տղան ծնողին թև ու թիկունք ա»***, ***«Տղու թոռը քո սեփական թոռն ա համարվում»***, ***«Տղեն ցեղի շարունակողն ա»*** և այլն:

Նշյալ կարծրատիպային պատկերացումները հիմնաքարային դեր են կատարում արու զավակին նախապատվություն տալու հարցում, որը հանգեցնում է այնպիսի անցանկալի հետևանքի, ինչպիսին սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումն է[14]:

Այսպիսով, ըստ հետազոտության արդյունքների՝ չնայած հասարակական կյանքում կանանց առաջընթացին, տարեց ծնողների խնամ-

---

[13] Տե՛ս **Ռ. Ա. Նահապետյան,** Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ): Պատմաազգագրական ուսումնասիրություն, Եր., 2012, էջ 21:

[14] Տե՛ս ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ. «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում» Զեկույց, Եր., 2011, էջ 27-35:

քի հարցում իգական սեռի զավակների ունեցած նշանակալի դերին, գենդերային պատկերացումները դեռևս կարծրատիպորեն կրում են տղամարդու գերակայության և արու զավակի գերադասելիության գաղափարները:

Բանալի բառեր – *կարծրատիպ, գենդեր, գենդերային կարծրատիպեր, գենդերային դերեր, դերային բաշխում, անհատական առանձնահատկություններ, ազգակցական համակարգ*

ЛИЛИТ ГАРГРЦЯН – *Стереотипы о женщине и мужчине в представлениях армян.* – Статья посвящена основным гендерным стереотипам армян. Учтены как межкультурная классификация гендерных стереотипов, так и исследования автора. Анализ показал, что гендерные стереотипы армян главным образом совпадают со стереотипами, выявленными в других культурах, но наряду с этим имеются и специфические для нашей культуры стререотипные гендерные представления.

Ключевые слова: *гендерные стереотипы, гендрные роли, распределение ролей, индивидуальные особенности, родственная система*

LILIT GARGRTSYAN – *The Display of Gender Stereotypes in Armenians' Concepts of Man and Woman.* – The article presents theoretical and empirical analyzes of main gender stereotypes. It discusses both the cross-cultural studies of gender stereotypes and their classification and the results of authors' own study. The results of the qualitative study show that Armenians' gender stereotypes mainly correspond with gender stereotypes revealed in different cultures, but there are also some stereotypical concepts that are specific to our culture.

Key words: *stereotype, gender, gender stereotypes, gender roles, role distribution, individual differences, kinship system*